
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԴՊՐԱՎԱՆՔԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հայաստանի վաղմիջնադարյան նշանավոր կրթարաններից է Արագածոտնի Ս. Աստվածածին վանքի դպրոցը, որի հիմնադրումը կապված է VII դ. հայտնի գիտնական, աստվածաբան Թեոդորոս Քոթենավորի անվան հետ: Նա եղել է այդ վանքի վանահայրը և կրել է նաև ճգնավոր մականունը¹: Աստծո հետ միավորվելու ճանապարհին բարոյապես մաքրվելու, առաքինություններով զարդարվելու, ապականող մեղքերից մարմնական ինքնազրկումներով ազատվելու ու հոգու մաքրագործության հասնելու համար Թեոդորոսը, դատելով նրա Քոթենավոր մականունից, կրել է խարազնագգեստ, քուրձ², ավելի ստույգ՝ *մազեղեն* կամ *քոթած*³ կարկատած³, կոպտակար հագուստ:

Թեոդորոսը հայտնի է դարձել 633 թ., երբ իր ուսուցիչ, աստվածաբան, անհաղթ փիլիսոփա Մաթոսաղա Սյունեցի Քերթոզի փոխարեն տակավին երիտասարդ մասնակցել է Կարինի հայ-բյուզանդական եկեղեցական ժողովին: Այնուհետև ճանաչում է ձեռք բերել Սարգիս Մայրազումեցու նորաբուս երևութականության հերձվածի դեմ անհաշտ պայքարով⁴:

Թեոդորոս Քոթենավորին են աշակերտել հետագայում կաթողիկոսներ Սահակ Գ Չորրորդեցին (677-703) և ս. Հովհան Գ Օձնեցի Իմաստասերը (717-728)⁵: Վերջինիս մասին Վարդան Արևելյին իր «Յայտնութիւն բանից ի նուաստէ Վարդանայ ի Յոհան Ուձնեցին» ճառում գրում է. «Արդ, հայրն մեր աստուածապարգեւ եւ հայրապետն փառազգեաց Յովհաննէս էր, որպէս գիրք պատմագրաց ցուցանեն աշխարհաւ երկոտասաներորդ ի Գուգարաց, գաւառաւ չորրորդ ի Տաշրայ, բնակութեամբ ի նշանաւոր գիւղաքաղաքէն Ուձնայ, ի յարենէ ծննդեան յազատ տանէ: Քաջաբոյս գոյով մանուկ եւ ուշիմ ի վարժս կրթութեան, հոռետրական ուսման եւ փիլիսոփայական արուեստից պարապել, գոյիս

¹ Տե՛ս Ս. Արեղյան, Երկեր, Գ, Եր., 1968, էջ 402:

² Տե՛ս «Հայերեն բացատրական բառարան», կազմեց Ստ. Մալխասեանց, հ. IV, Եր., 1945, էջ 589:

³ Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Գ, Եր., 1979, էջ 598:

⁴ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Եր., 2002, էջ 391, 328, 643:

⁵ Տե՛ս Ս. արթեպս. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 925:

տղայութեան անցուցանէր առ հանճարեղս: Քանզի գոյր յայնժամ այս-պիսի ուսման դպրոցք յաշխարհիս Հայոց, եւ Յունաց եւ Ասորոց ճարտարաց, յաղագս որոյ առեալ եւ զհմաստասիրական անունն կոչմամբ եւ արդեամբ զարդարեալ ամենայն առաքինութեամբ: Երթայր այնուհետեւ եռանդոտն բնութեամբն ի շարժմանէ Հոգւոյն, առ մեծ ճգնաւորն եւ անուանի վարդապետն Թէոդորոս Քոթենաւորն կոչեցեալ»⁶: Պատմիչի այս հիշատակությունը գետեղելով իր ստվարածավալ աշխատությունում՝ Հովհ. Շահխաթունյանցը փորձում է պարզաբանել. «Այս Քոթենաւորն կոչեցեալ Թէոդորոս անուն վարդապետ գտանէր յայնժամ կարգեալ վանահայր միանձանցն վանաց սրբուհոյ Աստուածածնի, որ յոտին Արագած լերինն ըստ Միքայելի Չամչեան (յԲ հատոր, համար 361): Այս մենաստան իցէ թերեւս վանքն Հատիճոյ անուանեալ յանուն սուրբ Աստուածածնի ի հիւսիսոյ կողմանէ յիշատակեալ լերին»⁷:

Եվ այսպէս, Հովհ. Շահխաթունյանցն առաջ է քաշել Արագածոտնի Ս. Աստվածածնի դպրավանքը Հատիճում տեղադրելու տեսակետը: Վարդան Արևելցու վերը հղված հիշատակությունում չի նշվում Թէոդորոսի կրթարանի գտնվելու վայրը: Այդ կապակցությամբ Մ. Չամչյանը, որին վկայակոչում է Հովհ. Շահխաթունյանցը, հայտնում է, որ «... ծաղկէր ի մէջ հայոց Թէոդորոս վարդապետը Քոթենաւորն կոչեցեալ, այր մեծիմաստ, ուսեալ և վարժեալ ի գիտութիւնս հելլենական իմաստից, և առաւելեալ ի տեղեկութիւնս Աստուածային գրոց. առատացեալ ի քերթուածս վայելչութեանյ բանից, և փայլեալ ի մաքուր վարս առաքինութեանյ: Որոյ աղագաս կարգեցաւ վանահայր միանձանց վանից Աստուածածնայ, որ ի յոտն Արագածու. ուր աշակերտեաց զբայլ լույսն և ուսոյց նոյց լայ բազմապատիկ մակացութիւնս և ապա առանձնացելալ ճգնէր ի միակեցական վարս խստութեանյ մինչև ի հասանել իւր ի խոր ծերութիւնս: Եւ եղև մին յաշակերտաց պուրբ երանելին Մահակ կաթողիկոս... և միսն Յովհաննէս Իմաստասէր հայրապետ հայոց...»⁸:

Հովհ. Շահխաթունյանցի կատարած սխալ տեղադրությունը արդյունք է Մ. Չամչյանի «*ի յոտն Արագածու*» արտահայտության թյուրըմբռնման: «Յոտն Արագածու» Արագածոտն է, համանուն գավառը, որ տարածվում էր Արագած լեռան հարավային լանջերին: Հավանաբար Հովհ. Շահխաթունյանցին շփոթության մեջ են գցել Մխիթար Անեցու խոսքերը սելջուկներից Արագածի տարածաշրջանի վանքերը՝ Հովհաննավանքը, ...Տեղերը, Ուշին, Սաղմոսավանքը, Զաքարյանների ուժերով ազատագրելու մասին, որտեղ երկրորդը հիշատակվում է «գ-

⁶ Վարդան Արևելցի, ճառք, Ներբողեանք, աշխ. Հ. Քյուսեյանի, Եր., 2000, էջ 353:

⁷ **Յովհ. Շահխաթունեանց**, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, Ս. Էջմիածին, 2014, էջ 85:

⁸ **Մ. Չամչյանց**, Հայոց պատմություն. հ. Բ, Եր., 1984, էջ 361:

Յառիճոյ վանքն»⁹: Քանի որ ներկայացվող շարքում ոչ բոլոր վանքերն են Արագածոտն գավառից, հետևապես պատմիչը, չփոթեցնելու նպատակով, «գոտն Արագածու» բառակապակցության փոխարեն գրել է «գերեսն Արագածու», որի ներքո պետք է հասկանալ այդ սրբազան լեռան շուրջը՝ ստորոտներին, լանջերին հառնող մենաստանները, ավելի ստույգ՝ դրանց վաղմիջնադարյան, նախագաքարյան շրջանի վանքային կառույցները: Պատմիչը չծավալվելու համար չի տարանջատել Արագածոտնի ու Շիրակի մերձարագածյան վանքերը, այլ դրանք միավորել է «գերես Արագածու» ընդհանրությամբ: Պարզ է, որ պատմիչը նկատի է առնում այն, որ Հառիճավանքը գտնվում է Արագած լեռան լանջին, բայց ինչպես գիտենք՝ հյուսիսային, որտեղից արդեն սկսվում են Շիրակի հարավային սահմանները: Մխիթար Անեցուն հաջորդած պատմիչներից Վարդան Արևելցու տեղադրությամբ՝ «Եւ Շիրակ գաւառն, ուր կան սուրբ ուխտքն Հռոմոսս և Մարմարաշէն և Կամրջաձոր, Դպրավանքն և Հառիճա... Իսկ ի հիւսիսոյ կողմանէ Արագածայ է երկիրն Շիրակայ»¹⁰:

Արագածոտնի Ս. Աստվածածին կրթական վանքի Հառիճավանքում գտնվելը մեր կողմից բացառելու երկրորդ կովանն այն է, որ այդ մենաստանը վաղ միջնադարում կոչվել է ոչ թե Տիրամոր, այլ Լուսավորչի անունով՝ Սուրբ Գրիգոր:

Ըստ Ղ. Ալիշանի՝ Հառիճավանքը հին պատմիչները չեն հիշում, և դա շարունակվում է մինչև X դարը, երբ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը, խոսելով Բյուզանդիայից քաղկեդոնականության հողի վրա հալածված հայ կրոնավորների՝ Հայաստան գալու և զանազան վայրերում վանքեր հիմնելու մասին, նշում է, որ Հառիճում կա «հին եկեղեցեակ մի տակաւին կանգուն Ս. Գրիգոր կոչեցեալ...»¹¹:

Ա. Ջալալյանի բնութագրմամբ. «Հառիճի հուշարձանախմբի կառույցներից Ս. Գրիգոր եկեղեցին իր ճարտարապետական ձևերով VI-VII դարերին բնորոշ կառույց է»¹²: Հ. Եղիազարյանի մանրամասնմամբ՝ Հառիճի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու «ճարտարապետական և կառուցողական ձևերը խիստ բնորոշ են 7-րդ դարին: Հավանաբար կառուցած լինեն Կամսարական իշխանները, որոնց սեփականությունն էր կազմում այդ ժամանակ ամբողջ Շիրակը»¹³:

⁹ **Մխիթար Անեցի**, Մատենան աշխարհիվեպ հանդիսարանաց, աշխ. Հ. Մարգարյանի, Եր., 1983, էջ 119:

¹⁰ «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», Բարիզ, 1960, էջ 15, 28:

¹¹ **Ղ. Ալիշան**, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 158:

¹² **Ա. Ջալալյան**, Հառիճի հուշարձանախումբը, «Լրաբեր հասարակական գիտություններ» (այսուհետև՝ ԼՀԳ), 1986, № 2, էջ 81:

¹³ **Հ. Եղիազարյան**, Հառիճա վանքը և նրա վիմագրությունը, «Էջմիածին», 1956, VIII-IX, էջ 83:

Իսկ վանքի գլխավոր եկեղեցին՝ Ս. Աստվածածինը, կառուցել է Ջաքարե ամիրսպասալարը 1201 թ.¹⁴, երբ գանձագին է արել Հառիճ գյուղն իր բոլոր սահմաններով:

Այսպիսով, մերժելով վաղմիջնադարյան նշանավոր Ս. Աստվածածին կրթավանքի՝ Հառիճավանքում գտնվելու տեսակետը՝ փորձենք այն փնտրել Արագածոտնում:

Մեծ Հայքի կենտրոնական՝ Այրարատ աշխարհի այդ գավառը Թալինից գատ պատմականորեն իր սահմաններում ընդգրկել է նաև Աշտարակի, Էջմիածնի, Արմավիրի վարչական տարածքների մի մասը¹⁵: Միանգամից ասենք, որ Ս. Աստվածածին անունով վանքեր Էջմիածնի և Արմավիրի տարածաշրջաններում «Տեղանունների բառարանում» չեն հիշատակվում¹⁶: Էջմիածնում այդպիսի մենաստանի գոյության դեպքում այն կհիշատակվեր ոչ թե Արագածոտնի, այլ Վաղարշապատի տեղանվամբ, իսկ Երվանդաշատի IV-V դդ. բազիլիկ եկեղեցին կկոչվեր այդ պատմական, թագավորանիստ բնակավայրի անվամբ:

Ուստի, նեղացնելով Արագածոտն պատմական գավառի շրջանակները, սահմանափակենք որոնողական պրպտումներն Աշտարակի տարածքում՝ ներառելով նաև Թալինի և Նիգ-Ապարանի տարածաշրջանները:

Հարկ է ընդգծել, որ ներկայիս Արագածոտնի մարզի Ս. Աստվածածին անվամբ բազմաթիվ պատմական եկեղեցիների հիմնումը կապված է ավելի ուշ՝ Ջաքարյանների իշխանապետության ժամանակաշրջանի հետ (XIII-XIV դդ.): Հետևապես վաղ միջնադարից Արագածոտնում ունենք Տիրամոր անունը կրող հետևյալ եկեղեցիները (պայմանականորեն ընդունելով, որ դրանք կարող էին վանքեր եղած լինել)՝ Ս. Աստվածածին եկ. (VII դ., Աշտարակ), Ս. Աստվածածին եկ. (VII դ., Թալին), Ս. Աստվածածին եկ. (V-VI դդ., Ագարակ՝ Աշտարակի), Ս. Աստվածածին եկ. (V-VI դդ., Ավան գյուղ), Ս. Աստվածածին եկ. (VI դ., Հարթավան), Ս. Աստվածածին եկ. (VI դ., Շենիկ), Ս. Աստվածածին եկ. (V-VI դդ., Նորաշեն՝ Ապարանի):

Անմիջապես պետք է բացառել Աշտարակի և Շենիկի Ս. Աստվածածին եկեղեցիները, քանի որ դրանք հայտնի են նաև իրենց կրկնանուններով, համապատասխանաբար՝ Կարմրավոր և Ս. Սարգիս: Քննարկումից դուրս են մնում նաև Հարթավանի և Նորաշենի (Շողակնի) Ս. Աստվածածին եկեղեցիները, քանի որ դրանց պարագայում խնդրո առարկա դպրավանքը կկոչվեր ոչ թե Արագածոտնի, այլ Նգայ կամ Նգատան, չնայած մերձարագածյան այդ գավառը հոգեհարազատ էր Թեոդորոս Քոթենավորին այնքանով, որ նրա մորական հայրենիքն էր. նա քեռոր-

¹⁴ Տե՛ս նույն տեղը:

¹⁵ Տե՛ս **Թ. Հակոբյան, Սո. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Եր., 1986, էջ 379: Այսուհետև՝ «Տեղանունների բառարան», հատորը և էջը:

¹⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 346-350:

դին էր Եզր Ա Փառաժնակերտցի կաթողիկոսի (630-641)¹⁷, ով ծագումով Ապարանի տարածաշրջանից էր¹⁸:

Քննարկման շրջանակներում մնում են Թալինի, Ագարակի և Ավանի Ս. Աստվածածին եկեղեցիները: Առաջին հայացքից թվում է, թե Թալինի փոքր եկեղեցին՝ իր նպաստավոր դիրքով, ընդարձակ կից տարածքներով, այն կառուցող հայոց իշխան (ապուհյուպատ պատրիկ), «Շիրակայ եւ Արշարունեաց տէր»¹⁹ Ներսէս Կամսարականի հովանավորությամբ, կարող է հավակնել Արագածոտնի Ս. Աստվածածին դպրավանքը լինելու:

Վերջինիս հետ ենթադրաբար կարող է համերաշխվել նաև Ագարակի միանավ բազիլիկ Ս. Աստվածածին եկեղեցին, որը, Ա. Տեր-Մինասյանի կարծիքով, վաղմիջնադարյան շինություն է և թվագրվում է IV-V դդ.²⁰, իսկ ըստ Թ. Թորամանյանի՝ XI դ. կառույց է²¹: Բայց երկու եկեղեցիների՝ Թալինի և Ագարակի հավակնությունները մերժվում են Արուճի 867 թ. արձանագրության պարագայում:

Մի քանի իմաստներով հետաքրքրական այդ վիմագիրն անչափ կարևոր հիշատակություն է պարունակում Ավանի վերաբերյալ: Արուճի և Կոշի միջև ոռոգման ջրօգտագործման չափը, որ կովի պատճառ էր դարձել երեք գյուղերի՝ այդ երկուսի և Գավառի միջև²², ի վերջո կարգավորվում է Սմբատ ասպարապետ Բագրատունու (հետագայի Սմբատ Ա թագավորի՝ 890-914 թթ.) իշխանական վճռով՝ ձեռամբ նրա գործակալ Գրիգորի: Ահա այդ քարտեղ են հրամանագրի վեցերորդ տողում Ավան գյուղը հիշատակվում է ՔՐԹԱՎԱՆ ձևով²³:

Քրթավանը կարելի է հասկանալ երկու իմաստով. նախ՝ որպես կրթավան, եթե այդ անվան առաջին արմատը՝ «քրթ»-ը, համարենք

¹⁷ Տե՛ս **Մ. Չամչյան**, նշվ. աշխ.:

¹⁸ Փառաժնակերտը տեղադրվում է Նիզ գավառում և հնարավոր է՝ լինի այժմյան Ապարան քաղաքը (տե՛ս «Տեղանունների բառարան», հ. 5, Եր., 2001, էջ 236):

¹⁹ Տե՛ս արձանագրությունը՝ **Գ. Յովսէփեան**, Քարտեզ հայ հնագրության, Վաղարշապատ, 1913, էջ 7, **Орбелн И.** Избранные труды. Ер., 1963, էջ 434: Հ. Օրբելին Թալինի Ս. Աստվածածին եկեղեցին կառուցող իշխանին նույնացնում է Ալամանի արձանագրությունում հիշատակվող և այդ տաճարը կանգնեցնող Ներսէս Կամսարականի հետ (տե՛ս նույն տեղը, էջ 434-439): Մինչդեռ Հ. Աճառյանը տարանջատում է Ալամանի և Թալինի համանուն Ներսէս Կամսարական իշխաններին, որոնք եղել են տարբեր անձինք և գործել են ոչ նույն ժամանակներում: Ըստ լեզվաբանի՝ Թալինի Ս. Աստվածածնի եկեղեցու հիմնադիրը 683-688 թթ. և 692-695 թթ. հայոց իշխան՝ իշխանապետ Ներսէս Կամսարականն է (տե՛ս **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Եր. 1948, էջ 33): Ե. Ասատրյանը Թալինի Ս. Աստվածածին եկեղեցին թվագրում է 681 թվականով (տե՛ս **Ե. Ասատրյան**, Թալինի շրջանի հուշարձանները, Եր., 2004, էջ 12):


²⁰ Տե՛ս **Ա. Տեր-Մինասյան**, Ագարակի միանավ բազիլիկան, «ԼՀԳ», 1979, № 7, էջ 73:

²¹ Տե՛ս **Թ. Թորամանյան**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, ժող. 2-րդ, Եր., 1948, էջ 226:

²² Կ. Մաթևոսյանը չի բացառում, որ Գավառ գյուղը ներկայիս Շամիրամն է (տե՛ս **Կ. Մաթևոսյան**, Արուճ, Եր., 1987, էջ 60):

²³ Տե՛ս վիմագիրը, նույն տեղում: Գրչագիրը՝ գեղանկարիչ **Գևորգ Համբարձումյանի**:

«կրթ (ել)»-ի հնչյունափոխված տարբերակ կամ առաջացած *քերթել* բառից, որ նշանակում է քերթվածք, բանաստեղծություն գրել, ստեղծագործել²⁴, և երկրորդ՝ մագեղեն հագուստ կրողների կամ պատրաստողների բնակավայր, երբ այն կապում ենք «քոթել»-ի հետ:



Երկու դեպքում էլ Ավանն աղերսվում է կրթության ու Քոթենավորի հետ: Բացի Արուճի 867 թ. վիմագրական փաստաթղթից, Ավանի օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ Թեոդորոս Քոթենավորը եղել է Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսի (613-628) եղբորորդին²⁵: Ավանը հեռու չէ Արշակունի արքաների դամբարանով հայտնի Աղցքից՝ 18-20 կմ, և երևի Թեոդորոսի հայրական կամ նրա տոհմին պատկանող տիրույթ էր եղել:

Մարդաշատ քաղաքներից, բնակավայրերից, տարանցիկ առևտրական բանուկ ճանապարհներից հեռու, բնության խաղաղ, առինքնող գրկում գտնվող Ավան գյուղի տարածքը միանգամայն հարմար վայր էր միջնադարում վարդապետարան հիմնելու, բարձրագույն կրթական գործ կազմակերպելու համար: Ըստ էության, Արագածոտնի Ս. Աստվածածին վանքի դպրոցը Սյունյաց նշանավոր վարդապետարանի մասնաճյուղն էր կենտրոնական Հայաստանում: Ենթադրելի է, որ դպրոցում դասավանդվել են աստվածաբանություն, փիլիսոփայություն, հունարեն և այլ առարկաներ:

Ի դեպ, Դվինի 607 թ. Գ ժողովի մասնակիցների շարքում հիշա-


²⁴ Տե՛ս «Հայերեն բացատրական բառարան», հ. IV, էջ 570:
²⁵ Տե՛ս «Պատմություն նահանգին Միսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի», Թիֆլիս, 1910, էջ 115:

տակվում է «Յուսանէս Աւանի» վանաց երեցը՝ վանահայրը²⁶:

Այսօր էլ Ավան գյուղում կանգուն է, ցավալիորեն կիսավեր վիճակում, ավելի քան հազար վեց հարյուր տարիների անցուդարձերի կնիքը հպարտորեն կրող Ս. Աստվածածին եկեղեցին: Այն ունի վաղմիջնադարյան հայկական եկեղեցաշինությանը բնորոշ միանավ բազիլիկի ձև՝ ուղղանկյուն հատակագծով:



Ավանի Ս. Աստվածածին եկեղեցին



Ավանի Ս. Աստվածածին եկեղեցու

հատակագիծն ըստ Թ. Թորամանյանի



Հայկական պատմական ճարտարապետության ուսումնասիրության երախտավոր Թ. Թորամանյանի նկարագրությամբ «Գյուղի մեջ եղած եկեղեցիի կիսավեր շենքը անվրեպ պատկանում է 5-րդ դարուն: Միջակ մեծության մի եկեղեցի է եղած, որուն արևելյան, հյուսիսային և արևմտյան պատերը գրեթե կանգուն են: Միայն հարավային պատն է, որ փլած է, սակայն այդ պատից ևս դեռ մնացած է 80-100 սմ բարձրությամբ պատի մնացորդ: Դուռը արևմտյան կողմից է եղած, սակայն բարավորների փլած լինելու պատճառով ճիշտ չափը հայտնի չէ: Ծիսության դարաշրջանին հատուկ է հատակագծի նեղ ու երկար ձևը: Պատուհանների կիսաբոլորակ վերջավորված աղեղները պայտաձև են, նույնպես պայտաձև է ավագ խորանի վերևի կամարի աղեղը, խորանի հատակագիծը ևս թեթև պայտաձև է: Խորանի երկու կողմերի որմնասյուները իրենց խոյակների վրա ունին հավասարաթև փոքր խաչեր, որոնք բոլորակի մեջ ամփոփված են հնագույն քանդակով: Հյուսիսային կողմի արտաքին երեսին վրա կա մի որմնասյուն, որ ապացույց է բացօթյա մի

²⁶ Տե՛ս **Ուխտանէս Եպիսկոպոս**, Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց, Վարդապատ, 1871, էջ 64:

կամարակապի գոյության, ինչպես կան Ապարանի, Երերույքի, Եղվարդի և ուրիշ հնագույն եկեղեցիների վրա: Արևելյան կողմին վրա թերևս ուներ բացօթյա խորաններ...

Այս կիսավեր շենքին մեջ ամենից ուշագրավն է քարուկիր շենքի շինության համար գործածված շաղախը, որը փոխանակ սպիտակագույն լինելու, մութ գորշագույն է, ճիշտ այն գույնով, ինչ գույն ունի ներկայիս ցեմենտը»²⁷:

Ավանի խոնարհ այդ սրբարանը, որն Արագածոտնի երբեմնի նշանավոր Ս. Աստվածածին կրթարան-վանքից պահպանված հիշատակն է, և որի գործունեությունը կապված է հայոց եկեղեցու ու միջնադարյան իրականության երևելի գործիչներ Թեոդորոս Քոթենավոր ուսուցչապետի, Սահակ Չորոփորեցի և ս. Հովհան Օձնեցի կաթողիկոսների հետ, այսօր կարիք ունի հիմնովին վերանորոգման ու նոր շուքով ներկայանալու:

Բանալի բառեր – *Արագածոտն, Ս. Աստվածածին, վանք, տեղադրություն, կրթարան, գործունեություն, կաթողիկոս, գավառ, արձանագրություն, եկեղեցի*

АШОТ МАНУЧАРЯН – Местоположение монастыря св. Богородицы в Арагацотне. – Одна из известных армянских раннесредневековых школ действовала в области Арагацотн при монастыре св. Богородицы. Её основал крупный учёный богослов Теодорос Отшельник (VII в.). В этой школе под его руководством учились будущие католикосы Саак Дзорапореци (677–703) и причисленный позднее к лику святых Иоанн Одзнецци (718–728).

Прежде ошибочно считали, что монастырь этот с его школой находился в селе Арич, административно принадлежавшем не Арагацотну, но Шираку. В статье, основываясь на сохранившейся в Аруче надписи 867 г., высказывается мнение, что монастырь св. Богородицы был расположен в селе Аван в области Арагацотн, где ныне стоит полуразрушенная одноимённая церковь V века.

Ключевые слова: *Арагацотн, монастырь св. Богородицы, местонахождение, школа, католикос, область, надпись, церковь*

ASHOT MANUCHARYAN – The Location of st. Astvatsatsin Dpravank in Aragatsotn. – One of the known early medieval schools was the school of St. Astvatsatsin (Holy Mother) Monastery in Aragatsotn. It was founded by Theodoros Kotenavor the Hermit in the VII century. The future Catholicoses such as Sahak Dzoroporetsi (677-703) and st. Hovhan Odznettsi (717-728) used to be his students. Formerly the monastery erroneously was placed in Aruch which was not in the Aragatsotn province but in Shirak province.

According to the inscription dating back to 867 the monastery is located in the village of Avan, Aragatsotn region. The V century church of St. Astvatsatsin is in half-ruined state standing in the mentioned village.

Key words: *Aragatsotn, St. Astvatsatsin church, location, school, Catholicos, province, inscription, church*

²⁷ Թ. Թորամանյան, նշվ. աշխ., էջ 233: